ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Խումբ **ԴԱՍՎԱՐՆԵՐ**

Թեմա **ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Հետազոտող՝ **ԼՈՒՍԻՆԵ ՍՈՒՐԵՆՅԱՆ**

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՀՈՒՆՋԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԴԱՍՎԱՐ

Ղեկավար՝ **ԹԱՄԱՐԱ ԱԹԱՅԱՆ**

ԳՈՐԻՍ 2022

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

21-րդ դարում ներառական կրթությունը դիտարկվում է որպես ժամանակակից հասարակության կարևորագույն հիմնահարց:Նրա ոչ ճիշտ կազմակերպմամբ ի հայտ են գալիս մի շարք դժվարություններ, որոնց լուծումը հետագայում դառնում է անհնարին: Այդ խնդիրն ավելի է հեշտանում, երբ կիրառում ենք ուսուցման համագործակցային տեխնոլոգիաները, որն ապահովում է խմբի անդամների միջև դրական աջակցություն ու համագործակցություն: Մեր հետազոտության թեման է՝ <<Համագործակցային ուսումնառության տեխնոլոգիայի կիրառությունը ներառական կրթության մեջ>>:

Ներառական կրթությունը ապահովում է կրթության հավասար պայմաններ, իսկ համագործակցային տեխնոլոգիաները նպաստում են, որ ստեղծվեն այդ պայմանները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Հետազորության նպատակն է ուսումնասիրել համագործակցային տեխնոլոգիայի կիրառությունը ներառական կրթությա մեջ, կարևորել տարբեր կարողություններ ունեցող աշակերտների առաջընթացը այս տեխնոլոգիայով աշխատելու ժամանակ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակին հասնելու համար ի հայտ են գալիս հետևյալ խնդիրները.

1. Ներառական կրթության առանձնահատկությունների մանրամասն ուսումնասիրություն:
2. Դժվարություններ, որոնք ի հայտ են գալիս այս ոլորտում:

3. **Համագործակցային տեխնոլոգիայի կիրառությունը դասաժամերին:**
4. **Համագործակցային տեխնոլոգիայի ուղիների, մեթոդների և միջոցների կիրառումը լավագույնին հասնելու համար:**

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Համագործակցային տեխնոլոգիայի, ինչպես նաև ներառական կրթության բազմակողմանի վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել խնդիրները, վերլուծել թերություններն ու առավելություններն այս ոլորտում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության թեման արդիական է, քանի որ ժամանակակից կրթական համակարգում բոլոր աշակերտներին, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողներին, ընդգրկում ու ներառում են ուսուցման պրոցեսում: Այդ ներառումն ավելի արդյունավետ կլինի ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ, հատկապես համագործակցային տեխնոլոգիայի: Եվ քանի որ այդ ամենը դեռ իրականացման փուլում է , ուրեմն դրանք դեռ արդիական են համարվում:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Մարդու մեջ հայտնի են մեծ թվով ուսուցման գործընթացներ, որոնք համագործակցում են՝ ստեղծելու մեր ողջ գիտելիքը:

Սովորելը գործողություն է, որի միջոցով մարդը կարող է ձեռք բերել նոր գիտելիքներ, վարքագիծ, հմտություններ, արժեքներ կամ նախասիրություններ կամ փոփոխել դրանք, որոնք նախկինում ձեռք էին բերել:

Ուսուցման տեսակների ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի շատ տարբեր առարկաների համար, որոնց շարքում առանձնանում են հոգեբանությունը, թերապիան, մանկավարժությունը և նյարդաբանությունը: Դրա շնորհիվ, մարդու վարքի ուսումնասիրության գիտության սկզբից ի վեր, սա եղել է դրա շրջանակներում ամենակարևոր թեմաներից մեկը:

Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաների թվում իր հաստատուն տեղն ու դերն ունի ուսուցման համագործակցային եղանակը, որը մեծապես նպաստում է ուսման արդյունավետության բարձրացմանը: Այն դժվարությամբ է մուտք գործել դպրոց,քանի որ դժվար էր ուսուցչի համար ավանդական, ուսուցչակենտրոն մեթոդներից անցում կատարել աշակերտակենտրոն մեթոդներին: Այս ուսուցման ժամանակ աշակերտները գիտելիքներ ձեռք են բերում ոչ միայն ուսուցչի օգնությամբ, այլև ինքնութույն ,այսինքն՝ պասիվ ընկալողից դառնում են հայտնագործող և ուսման ակտիվ մասնակից:

Համագործակցային ուսուցումը զույգերով կամ խմբերով աշխատանքներ են որևէ խնդրի լուծման, թեմայի հետազոտման կամ նոր գաղափար իրականացնելու ուղղությամբ: Այն իր բնույթով այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Համագործակցությունը իր տեսակով ձևավորեց խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ:

Համագործակցային ուսուցման տարրերը 5 -ն են՝

1. **Խմբում աշխատելու դրական փոխկախվածություն**
2. **Միմյանց հանդեպ խթանող փոխազդեցություն**
3. **Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն**
4. **Սոցիալական հմտություններ**

5. Խմբային գործընթաց

Համագործակցային ուսուցումը հանդիսանում է աշակերտների առողջ միջանձնային հարաբերությունների ստեղծմանը, դասը արդյունավետ և աշխույժ դարձնելու,սովորողների ակտիվությունը բարձրացնելու հիմնական միջոց:

Խմբերը կազմված են լինում տարբեր գիտելիքներ և կարողություններ, ինչպես նաև մտածելակերպ ունեցող աշակերտներից, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է իր տեսակետն ու միտքը, ծանոթանում դիմացինի տեսակետին ու սովորում միմյանցից: Դրանից բացի պետք է պայմաններ ստեղծել, որ աշակերտները մտածեն, որ իրենց առաջարկն ու մտածածը ճիշտ է, այսինքն՝ ստեղծել կարծիքների ինքնուրույն և ազատորեն արտահայտելու նպաստավոր միջավայր: Խմբային աշխատանքի այս ձևը կիրառվում է տարրական դասարաններում,սակայն մի խումբ դասվարներ խուսափում են դրանից՝ առաջացած աղմուկի պատճառով: Դա լուծելու համար պետք է նախապես ստեղծել ու ներկայացնել խմբում աշխատելու սեփական կանոնները, որը մշակում է տվյալ դասարանի ուսուցչը՝ աշակերտների մասնակցությամբ:

Համագործակցային ուսուցման հիմնական մեթոդներն են՝

- **Աշակերտների թիմային առաջադիմություն**
- **Խճանկար**
- **Շրջագայություն պատկերասրահում**
- **Երեք բանալի և մեկ կողպեք**
- **Հինգրոպեանոց ազատ շարադրանք**

Խմբային այս մեթոդները այն հիմնական մեթոդներն են, որոնք խթան են հանդիսանում ուսուցման մեջ հետ մնացող աշակերտների համար: Այստեղ մեծամասամբ գնահատվում է նրանց առաջընթացը: Դրանք լուրջ խթան

են հանդիսանում ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նրանք նույնպես ներդրում ունեն թիմային աշխատանքի արդյունքում: Իսկ միջին և բարձր առաջադիմությամբ աշակերտների օգնությունը նրանց ոգևորում և տանում է առաջ: Այս դեպքում գնահատվում են և խմբերը, և առանձին աշակերտները:

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ըստ վիճագրական տվյալների աշխարհում ապրում է մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող ավելի քան կես միլիարդ մարդ: Նրանց ֆիզիկապես և սոցիալապես սահմանափակված լինելը մեկուսացնում է հասարակությունից և արգելում իրենց ակտիվ մասնակցությունը տվյալ համայնքի, մարզի և երկրի զարգացմանը:

Ներառական կրթությունը հենվում է բոլոր երեխաների՝ այդ թվում նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողների, ուսում ստանալու իրավունքի վրա, որն էլ նպաստում է նրանց ակտիվ մասնակցությունը համայնքի, մարզի և երկրի զարգացմանը:

Հիմք ընդունելով Սահմանադրության 11-րդ հոդվածը՝ երեխայի կրթության իրավունքը, հաշմանդանությունը չի կարող արգելք լինել մարդու՝ կրթություն ստանալու իրավունքի վրա:

Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք, որն ամրագրվել է դեռևս 1948 թ-ի <<Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի >> 26-րդ հոդվածում:

Համաձայն 1994 թ-ի <<Սալամանկայի հռչակագրի>>՝ յուրաքանչյուր երեխա ունի սովորելու առանձնահատկություններ, այդ իսկ պատճառով բոլոր դպրոցներում սովորողների համար պետք է ստեղծված լինեն աշակերտակենտրոն մանկավարժական հիմքեր, որոնք պետք է ուղղված լինեն այդ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների բավարարմանը: Կրթության ժամանակ ուսուցիչները հաճախ են բախվում դժվարությունների՝ ուսումնական ծրագիրը բոլոր աշակերտների համար հավասարապես

մատչելի դարձնելու գործընթացում: Կախված մտավոր, վարքային, հուզական, զգայական և ֆիզիկական զարգացման առանձնահատկություններից՝ աշակերտները տարբեր կերպ են յուրացնում ուսումնական նյութը:

Ներառում չի նշանակում ձուլում մյուս աշակերտների հետ, քանի որ բոլոր աշակերտները տարբերվում են իրենց սովորելու և մտածելու արագությամբ: Ուղղակի անհրաժեշտ է իրականացնել հասկանալի և մատչելի դասավանդում և մեծ համբերատարություն: Այս կրթությունը բացառում է երեխաների ցանկացած խտրականություն, ապահովում հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց նկատմամբ, ստեղծում հավասար հնարավորություններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար ևս:

Բոլոր աշակերտների որակյալ կրթության տրամադրումը լուրջ ջանքեր է պահանջում ուսուցիչներից: Բացի այդ, այս կրթութունը պահանջում է մասնագետների և ընտանիքների կողմից ուսուցման գործընթացի կազմակերպում և երեխաների համար լավագույն միջավայրի ստեղծում համատեղ ջանքերով, որպեսզի հաջողություն գրանցեն թե՛ դպրոցում,թե՛ հասարակական կյանքում:

Նման դեպքերում պահանջ է առաջանում ոչ միայն ուսուցիչների համագործակցության, այլև թիմային աշխատանքի տարբեր ձևերի կիրառում: Միևնույն

ժամանակ այն պահանջում է դասավանդման նոր ձևեր, որոնք կապահովեն բոլոր ռեսուրսների ճիշտ և պատշաճ օգտագործումը:

ԱՈՒՏԻԶՄ

Աուտիզմը հիվանդություն չէ, այլ վիճակ, որով մարդիկ ծնվում են: Աուտիզմը անհնար է բուժել, սակայն ժամանակի ընթացքում կարելի է շտկել և մարդուն սոցիալական կյանքին հարմարեցնել: Այն զարգացման հապաղում է ու արտաքին աշխարհի հետ շփվելու ցանկության բացակայություն, որն արտահայտվում է ավելի ուշ և հայտնաբերելու համար պետք է հետևել երեխայի վարքին:

Աուտիզմով հիվանդ մարդիկ հիվանդագին են ընդունում նոր բանը, հակված են ամեն ինչ ծիսականացնելու, դժկամությամբ են իրենց զբաղմունքից շեղվում, սակայն երբեմն կարող են հանկարծ ինչ-որ բան անել: Երբեմն ունենում են նոպաներ և կարող են իրենք իրենց վնասել:

Աուտիզմի մասին առաջին անգամ խոսվել է 18–րդ դարում: Նման մարդկանց նկարագրում էին որպես ներփակ, չխոսկան, սակայն գերազանց հիշողությամբ և հանճարեղ մտավոր առանձնահատկություններով: Այսպիսի երեխաներն ունենում են ֆենոմենալ հիշողություն և արվեստի գլուխգործոցներ ստեղծել ու

անհավանական արդյունքներ ցուցադրել սովորելու ընթացքում: Աուտիկների առանձնահատկություններից մեկը միօրինակ շարժումների կրկնությունն է և մեկ առարկայի վրա կենտրոնացումը: Աուտիզմի նախանշաններն են ՝ խոսքի դանդաղում, որևէ հարցի, որն ուղղված է իրեն, անարձագանք թողնելը, տեսողական կոնտակտի դժվար հաստատում, գերզգայուն կամ նվազ զգայուն են ձայների, համերի, հոտերի, լույսերի և գույների հանդեպ: Այս հիվանդությունը տարբեր տեսակ է դրսևորվում: Եթե ճանաչում ես աուտիզմ ունեցող որևէ մեկին, ուրեմն ճանաչում ես միայն մեկին:Աուտիզմ ունեցող յուրաքանչյուր մարդ անհատականություն է, առանձնահատուկ: Նրանք էլ սովորական մարդիկ են բոլորի նման,գիտեն սիրել, ընտանիք կազմել: Նրանք սիրում են շփվել վտանգների հետ: Տղաների մոտ 5 անգամ ավելի շատ է աուտիզմ հայտնաբերվում, քան աղջիկների մոտ:

Աուտիկ երեխաներն անհամաչափ են զարգանում, ունենում են հաղորդակցման արտահայտված խնդիրներ, ինքնամփոփ են և խուսափում են շրջապատի հետ շփումից: Տանը կամ հասարակության մեջ իրենց այնպես են պահում, ասես մենակ լինեն, չեն արձագանքում, ուրիշների վրա ուշադրություն չեն դարձնում, խաղում են միայնակ, երբեմն մենախոսում են, երբեմն լռում: Նրանք շփվում են առարկաների, այլ ոչ մարդկանց հետ, խուսափում ուղիղ հայացքներից, տեսողական կոնտակտից: Հույզերը սահմանափակ են, հաճախ անտարբեր,կարող են խոցելի և վախեցած լինել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի աջակցություն ստանալ ծնողի և հասարակության կողմից, որպեսզի սովորի, գնա դպրոց, ընդունվի հասարակության կողմից: Եթե բոլոր երեխաները, անկախ իրենց տարբերության, միասին կրթություն ստանան, յուրաքանչյուրը կշահի դրանից. սա է ներառական կրթության անկյունաքարը:

Այսինքն, ներառական կրթություն նշանակում է տարբեր, զանազան երեխաների ուսուցում կողք կողքի, միևնույն դասարանում:

Ակնհայտ է, որ մեր հմուտ և փորձառու ուսուցիչները դժվարություններ են ունենում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատելիս: Նրանք փորձում են որոշ մեթոդական հնարներ ու միջոցներ կիրառել, հեշտացնել, պարզեցնել, որից կատարված աշխատանքը կբերի ցանկալի արդյունքի: Այդ գործընթացն առավել դժվարանում է մտավոր զարգացման դժվարություններ ունեցող երեխաների ուսուցման ընթացքում: Այս դեպքում շատ կարևոր է կիրառել ուսուցման բազմազան տեխնոլոգիաները, հատկապես համագործակցային տեխնոլոգիան:

Համագործակցային ուսուցման նպատակն է՝ յուրաքանչյուր անհատի (այդ թվում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողի) դարձնել ուժեղ անձնավորություն ժամանակակից հասարակության մեջ, նաև ձևավորել ինքնուրույն, պատասխանատու, ակտիվ ու հմուտ մարդ: Այս ուսուցումն առավել արդյունավետ է միայն այն դեպքում, եթե այն իրապես համագործակցային է, այլ ոչ թե ավանդական խմբային աշխատանք: Կազմակերպված խմբային աշխատանքները պետք է այնպես կազմակերպել, որ ԿԱՊԿՈՒ երեխան կարողանա անկաշկանդ ինքնադրսևորվել, ինքնահաստատվել: Այս ուղղությամբ արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան մեթոդներին ու տեխնոլոգիաներին տիրապետելն է: Իհարկե, բոլոր այս դժվարությունները ուսման մեջ հնարավոր չէ միանգամից վերացնել, սակայն աշակերտներին ոգևորելով կարող ենք հաջողություններ գրանցել:

Օգտագործած գրականություն

《Ներառական կրթության ռազմավարություններ》

Դասագիրք

Հեղինակներ

Ռենատա Տիքա

Բրայեն Հ. Էբերի

Քրիսթոֆեր Ջոնսթոն

Ալվարդ Պողոսյան

Երևան,2018թ,252 էջ

《Ներառական կրթություն》

Ուսումնական ձեռնարկ

Հեղինակներ

Սուսաննա Թադևոսյան

Անահիտ Բախշյան

Արմեն Հովսեփյան

Սաթենիկ Հայթյան

Երևան,2017,146 էջ

《Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը》

Հեղինակ

Խաչատրյան Ս.Գ

Գյումրի, 2006, 96 էջ

《Համագործակցային ուսուցում》

Հեղինակներ

Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայա- թյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ.,

Երևան, «Անտարես» հրատ., 2006, 123 էջ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն ----------2
2. Հետազոտության նպատակը----------2
3. Հետազոտության խնդիրները----------2
4. Հետազոտության նշանակությունը----------3
5. Հետազոտության արդիականությունը----------3
6. Համագործակցային ուսուցում----------3
7. Ներառական կրթություն----------5
8. Առտիզմ----------8
9. Եզրակացություն----------9

10.Օգտագործած գրականության ցանկ----------**10**